

ԳԱՐԵԳԻՆ ՈՒ ԵԶՐԱՍ ՆԵՐՍԻՍԵԱՆՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՊՂՇՈՒԹԻՒՆԸ

Posted on February 16, 2021 by Keghart




Category: [Opinions](#)



Գեորգ Եազըճեան, Երեւան, 7 փետրուար 2021

Ուշադրութեամբ դիտեցէ՛ք կցուած գեղանկարը, որ անցեալ տարուան աշնան, Արցախեան գոյամարտի օրերուն, օգտուելով ամբողջ աշխարհի հայոց ուշադրութիւնը այդ գոյամարտին վրայ կեդրոնացած ըլլալէն, տեղադրուած է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդարանին մէջ: Յիշեցնենք. կեդրոնը Մոսկուա գտնուող այդ թեմի առաջնորդը Ամենայն Հայոց հայրապետութեան գահին բազմած մարմնացեալ սատանայ, Գեղարդագող Գարեգին Բըրըր Ներսիսեանի կրտսեր եղբայրն է՝ մանկապիղծ ու միասեռական Եզրասը:



Գեղանկարը կը պատկերէ նահապետակ սպարապետ Վարդան Մամիկոնեանն ու Աւարայրի ճակատամարտի միւս վկաները՝ գեղանկարին աջ կողմը պատկերուած բազմութեան մը առջեւ ծնրադիր: Սովորական դիտորդը հաւանաբար չնկատէ մեր Եկեղեցւոյ կարգուկանոնին անյարիր երեւոյթը՝ սուրբերու ծունկի գալը մէկ ուրիշ սուրբի առջեւ, այս պարագային՝ Վարդանանց ծնրադրումը մեր Եկեղեցւոյ սրբացուցած Ղեւոնդ Երեցի առջեւ: Հաւանաբար կարենայինք դժուարութեամբ կուլ տալ Վարդանանց սուրբերու ծնրադրումը այդ սուրբին ու Մայր Հայաստանը խորհրդանշող արձանին առջեւ: Սակայն ի՞նչ ըսել, որ հայ գինուորական վկաները ծնրադրած են սովորական մահկանացուներու, առաւել եւս անսուրբ արարածներ Գարեգինի, Եզրասի ու Արշակի առջեւ: Եզրասը պատկերուած է Ղեւոնդ Երեցի աջ կողմը, իսկ Գարեգինի ձախ ուսին ետեւը կ'երեւի Ներսիսեան եղբայրներու ծննդավայր Ոսկեհատ գիւղի (երբեմնի 4-րդ սովխոզի) ծնունդ եւս մէկ պիղծ արարած՝ դիւանապետ Արշակ Խաչատրեանը, որ վերջերս արքութեան պատուի (sic !) ալ արժանացած է իր համագիւղացի աթոռակալէն՝ հաւանաբար Ռոպերթ Քոչարեան կոչուող արիւնարբու աւագակապետին իր ջերմեռանդ նուիրումին համար՝ ոչ առանց իր շէֆին հաւանութեան, թերեւս նաեւ՝ քաջալերանքով:

Մենք գիտէինք, որ սովորական մահկանացուներն որ կը ծնրադրեն սուրբերու կամ անոնց պատկերներուն առջեւ՝ իրենց համար հայցելով անոնց բարեխօսութիւնը մեր Տիրոջ առջեւ: Սակայն, ինքն իրեն Հայ Եկեղեցւոյ կանոնադրութեան, աստուածաբանութեան եւ ամեն ինչին այբն ու քեն պատկերացնող Գեղարդագող Գարեգինը իրեն թոյլ կու տայ ամեն տեսակի խախտում եւ պղծում, այնքան ատեն, որ բազմութիւններ Մայր Աթոռ մտնելով զինք դուրս չեն շարտեր այդ սրբավայրէն: Ըստ այդ անոպային՝ նոյնիսկ սուրբերը պետք է ծունկի գան իր առջեւ...

Ի՞նչ որակում տալ միւս փաստին՝ Գարեգին ու Եզրաս Ներսիսեան եղբայրներու հաւասարեցմանը Ղեւոնդ Երեցին, կամ առնուազն, Գեղարդագողն ու մանկապիղծը սուրբին համադաս դարձնելու անթաքոյց ձգտումը:

Մինչեւ ե՞րբ հայ հասարակութիւնը, մասնաւորաբար նուիրապետական միւս երեք Աթոռներու գահակալները, յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ն ու Երուսաղէմի պատրիարք Նուրհան արք. Մանուկեանը, Հայ Առաք. Ս. Եկեղեցւոյ շուրջ 100 «եպիսկոպոս»ներուն իսկական՝ եպիսկոպոսները, հազարաւոր ծառաներն ու միլիոնաւոր հաւատացեալները պիտի լռեն այս աղաղակող պղծութիւններուն դիմաց, հանդուրժեն սրբապիղծներու ներկայութիւնը մեր սրբութիւն սրբոցին մէջ:

Յիշեցնենք, որ չորս տարիէ աւելի է, ինչ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը՝ մեր Տիրոջ Իջման Ս. սեղանով ԳՈՑ է հաւատացեալներուն առջեւ՝ նորոգութեան պատրուակով, որու համար businessman Գարեգինը 10 միլիոն ամերիկեան տոլար կը պահանջէ՝ շանթաժի ենթարկելով աշխարհի հայութիւնը. 10 միլիոն տոլար եթէ չհաւաքէք՝ Մայր Տաճարը ձեր առջեւ երբեք բաց պիտի չգտնէք: Իր գոյութեան շուրջ 1718 տարիներուն ընթացքին,

Մայր Տաճարը երբէւ, նոյնիսկ մոսկոյթաբարական ու լեւկոփութեան վայրագ

հորդաներու արշաւանքներու տարիներուն այսքան երկար ժամանակ գոց չէ մնացած...

Ո՞վ ու ե՞րբ վերջ պիտի տայ Ներսիսեան եղբայրներու պղծութիւններուն: Համոզուած եմ, որ անոնց այդ պղծութեանց տրամաբանական հետեւանքն են այն աղետները որոնք յատկապէս վերջին ամիսներուն իրարու կը յաջորդեն մեր հայրենիքին ու ընդհանրապէս հայութեան կեանքին մէջ: Չմոռնանք, որ մեր Տէրը միակ ԱՆՆԵՐԵԼԻ մեղք յայտարարեց Սուրբ Հոգիին հայիոյելը: Գրաբարեան իմաստով՝ հայիոյանք հասկացութիւնը շատ ընդարձակ է: Մի՞թէ Ս. Հոգիին հայիոյել չէր Գարեգին Ներսիսեանի «ընտրութիւն»ը կեղծիքով, կաշառքով ու զոռպայութեամբ 27 հոկտեմբեր 1999-ին՝ ուղեկցուած նոյն պահուն Հ. Հ.ի Ազգային Ժողովին մէջ իրագործուած աննախադէպ ու աներեւակայելի նախճիրով: Ըստ Աստուածաշունչ մատեանին՝ մեղքերու համար կը պատժուին նա՛նէս այդ մեղքերը գործող առաջնորդներուն հետեւողները:

Հայութիւնը պարտաւոր է վերջակէ՛տ դնելու Մայր Աթոռը իրենց պապական ազարակին ու առեւտուրի կեդրոնի վերածած Ներսիսեան եղբայրներու շահատակութիւններուն: Այլապէս՝ աղետները կրնան շարունակուիլ, որու համար բոլորս ալ յանցաւոր պիտի ըլլանք՝ կապիկի երեք դիրքերուն մեր հաւատարմութեան պատճառով:

There are no comments yet.